Հավելված N 2
2025 թվականի հունվարի «15»-ին կնքված
«1032-11002/2025-SS» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություն |
| Դրամաշնորհի N | 1032-11002/2025-SS |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2025-31.03.2025 |
| Ներկայացման օր | 15.04.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Լիլիթ Մուրադյան, Ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար։

| |
|---|
| 1.1.Անհատական կարիքների գնահատում և ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում<br>1.2.Խնամքի անհատական ծրագրի կազմում, առաջին տնայցերի իրականացում<br>1.3.Խնամքի ծառայությունների տրամադրում<br>2.1.Սոցիալական միջոցառումների պլանավորման մեկնարկ, շահառուների նախասիրությունների բացահայտում հարցման միջոցով<br>2.2.Առաջին սոցիալական միջոցառումների կազմակերպում (էքսկուրսիա, տոնական միջոցառում):<br>3.1.Սոցիալական աշխատողի խորհրդատվություն<br>4.2.Անձնակազմի վերապատրաստում<br>5.1.Համայնքային գործընկերների ներգրավում և համագործակցության պայմանների սահմանում:<br>5.2. Համայնքային միջոցառումների կազմակերպում և տարեցների մասնակցության խթանում: |

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողություններն իրականացվել են ըստ աշխատանքային պլանի: Ծրագրում ներգրավվել է ընդհանուր առմամբ 23 շահառու, որոնցից կին՝ 22 հոգի, հաշմանդամություն ունեցող անձ՝ 12 հոգի, հաշմանդամություն ունեցող անձ 18-65 տարեկանների խմբում՝ 1 հոգի (62 տարեկան) միայնակ անժառանգ՝ 8 հոգի, միայնակ՝ 16 հոգի, Ա խմբում դասակարգված անձանց քանակը՝ 5 հոգի: Շահառուները, բացառությամբ հաշմանդամություն ունեցող 62-ամյա 1 անձից, 73 տարեկանն անց են:

Բոլոր շահառուների համար իրականացվել է ֆունկցիոնալ վիճակի գնահատում՝ Ասոցիացիայի կողմից մշակված գերիատրիկ սանդղակների միջոցով, ինչի հիման վրա կազմվել է անհատական խնամքի ծրագիր:

Ծառայությունները տրամադրվել են ըստ նախապես սահմանված պլանի և անհատական խնամքի ծրագրերի՝ պահպանելով խնամքի չափորոշչով սահմանված դրույթները:
Ծառայությունները ներառել են՝

- կենցաղային աջակցություն (անձնական հիգիենայի պահպանում, տան սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում, գնումներ, կերակուրի պատրաստում և այլն),
- առողջական վիճակի մոնիթորինգ (վերահսկում, օրենքով հասանելիք դեղորայքի ստացում-տրամադրում և այլն),
- ուղեկցում և ուղղորդում (անհրաժեշտության դեպքում),
- սոցիալական խորհրդատվություն,
- սոցիալ-հոգեբանական օգնություն:

Ծառայությունները տրամադրվել են սոցիալական աշխատողի, 2 սոցիալական սպասարկողի և բուժքրոջ կողմից:

Շահառուների նախասիրությունների բացահայտման նպատակով անցկացվել է հարցում: Այն ցույց է տվել, որ նրանց գերակշռող մասը չի ցանկացել մասնակցել բացօթյա կամ խմբային միջոցառումներին՝ նշելով հետևյալ պատճառները.

- եղանակային անբարենպաստ պայմաններ,
- ցրտի նկատմամբ զգայունություն,
- առողջական խնդիրներ և շարժունակության սահմանափակումներ:

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ որոշում է կայացվել հետաձգել սոցիալական միջոցառումները մինչև եղանակային բարելավում: Միաժամանակ պլանավորվում են այլընտրանքային ներգրավման ձևաչափեր՝ սեզոնային նպաստավոր պայմանների դեպքում իրականացնելու նպատակով:

Ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել է ծրագրային աշխատակիցների՝ խնամքի ծառայություններ մատուցող անձնակազմի մասնագիտական վերապատրաստում՝ ուղղված՝

- ծառայությունների որակի բարձրացմանը,
- շահառուների ֆունկցիոնալ գնահատման կարողությունների զարգացմանը,
- տարեցների հետ հաղորդակցման և մասնագիտական էթիկայի հմտությունների ամրապնդմանը:

Ծրագրի արդյունավետ իրագործման նպատակով Ասոցիացիան համագործակցել է՝ ՄԾ-ի,, Իջևանի համայնքապետարանի, Տավուշի մարզպետարանի հետ: Ներգրավված գործընկերների հետ համագործակցությունը նպաստել է շահառուների ներգրավմանը, աջակցման համակարգի բարելավմանը և համայնքային ներգրավվածության բարձրացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

| |
|---|
| Առկա չեն: Ծրագրի մասին պատմող հոդված(ներ) նախատեսված է հրապարակել առաջիկա ամիսների ընթացքում: |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Միջոցառման գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն արձանագրվել: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

| |
|---|
| Հաջորդ եռամսյակի ընթացքում պլանավորված է շարունակել խնամքի ծառայությունների տրամադրումը սոցիալական աշխատողի, սոցիալական սպասարկողների և բուժքրոջ միջոցով: հունիս ամսվա ընթացքում պլանավորված է շահառուների վիճակի վերագնահատում իրականացնել՝ վերանայելով խնամքի պլանը: Բացի այդ, նախատեսված է խթանել շահառուների մասնակցությունը համայնքային միջոցառումներին և մշակութային կյանքին: |

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

| |
|---|
| Բոլոր գործողություններն իրականացվել են ըստ աշխատանքային պլանի: |

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

-------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Նախագահ՝ Ա. Թորոսյան